Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ 4

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
2011թ. հունիսի 17-ի
N 31-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝
Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ 2005թ. ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 222.210.00504
ՎԿԱՅԱԿԱՆ 03 Ա 068995
ՀՎՀՀ 00403436
2005թ. ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ ԳՐԱՆՑՎԱԾ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ 02.3
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԱԾ Է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԷՐԵԲՈՒՆՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ
22/06/2011թ.
ԷՐԵԲՈՒՆՈՒ Տ/Բ ՊԵՏ՝
Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

# «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱԽՏՈՐՈՇԻՉ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. Կազմակերպության կանոնադրության 9-րդ, 11-րդ, 12-րդ կետերը և 14-րդ կետի լ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

9. Կազմակերպության անվանումն է՝
հայերեն լրիվ՝ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարակա լաբարատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
հայերեն կրճատ՝ «Հանրապետական անասնաբուժասանիտարական բուսասանիտարական լաբարատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ,
ռուսերեն լրիվ՝ "Республиканский ветеринарно-санитарный и фитосанитарный цент лабораторных услуг" государственная некоммерческая организация,
ռուսերեն կրճատ՝ "Республиканский ветеринарно-санитарный и фитосанитарный цент лабораторных услуг" ГНКО,
անգլերեն լրիվ՝ "Republican veterinarian-sanitarian and phyto-sanitarian center of laborato services" state non commercial organization,
անգլերեն կրճատ՝ "RVSFSCLS" SNCO:

11. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակն են՝
ա) կենդանիների հիվանդությունների (այդ թվում՝ թռչունների, մուշտակամորթ գազաններ, ձկների և մեղուների) լաբորատոր ախտորոշման սահմանումը,
բ) կենդանական ծագում ունեցող մթերքի և հումքի փորձաքննության կազմակերպումը,
գ) սերոմոնիթորինգի իրականացումը,
դ) շիճուկաբանական հետազոտությունների իրականացումը,
ե) Հայաստանի Հանրապետության տարածքում բույսերի կարանտին օրգանիզմներ, հիվանդությունների և մոլախոտերի հայտնաբերումը:

12. Կազմակերպությունը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյ տեսակները՝
ա) կենդանական և բուսական ծագում ունեցող մթերքի և հումք անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացում,
բ) լաբորատոր և այլ մեթոդներով կենդանիների հիվանդությունների ախտորոշում,
գ) բակտերիոլոգիական, շիճուկաբանական, թունաբանական և մակաբուծաբանակ հետազոտությունների իրականացում,

դ) գյուղատնտեսական կենդանիների կլինիկական զննումների և հետազոտությունների իրականացում,

ե) իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկրվող և արտահանվող բույսերի, բույսերի պաշտպանության միջոցների, բուսական և կենդանական ծագում ունեցող մթերքների, կարգավորվող առարկաների լաբորատոր փորձաքննություն:

14. Բ/ լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը.

*Սույն փոփոխությունը հանդիսանում է 2005թ. հունիսի 9-ին գրանցված «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության բաղկացուցիչ մասը, որը կազմվել է 2011թ-ի հունիսի ____-ին և բաղկացած է երեք թերթից:*